Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2023 թվականի հոկտեմբերի 17-18-ը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (մայրաքաղաք Պեկին) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

Քրիստինե Ղալեչյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն՝ մայրաքաղաք Պեկին, 2023թ. հոկտեմբերի 17-ից 18-ը

4. **Հրավիրող կողմը.**

ՀՀ-ում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (ՉԺՀ) դեսպանություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար է նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն «Գոտի և ճանապարհ» միջազգային համագործակցությանն ուղղված 3-րդ ֆորումին

6. **Քննարկված թեմաները.**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մայրաքաղաք Պեկինում կայանալիք «Գոտի և ճանապարհ» միջազգային համագործակցությանն ուղղված 3-րդ ֆորումին քննարկվել է «Գոտի և Ճանապարհ» նախաձեռնությունը, որն առաջ է քաշվել 2013թ.-ին ՉԺՀ նախագահ Սի Ծինփինի կողմից: Ուստի, այն ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված գլոբալ ռազմավարություն է՝ նախատեսված ստեղծելու առևտրային, ֆինանսական և մշակութային ցանց, որը կընդգրկի Արևելյան Ասիայից Եվրոպա ընկած տարածքը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Հիմնական ծրագիրը ներառել է բացման արարողություն, 3 բարձր մակարդակի, 6 թեմատիկ ֆորումներ և Գլխավոր տնօրենների կոնֆերանս:

Ֆորումի ընթացքում հադիպումներ են իրականացվել Ենթակառուցվածքային ներդրումների Ասիական բանկի (AIIB) փոխնախագահ և կորպորատիվ քարտուղար Լուդգեր Շուկնեխտի հետ: Հանդիպմանը քննարկել ենք AIIB-ին Հայաստանի անդամակցության հնարավորությունները, իսկ Լուդգեր Շուկնեխտին

պատրաստակամություն է հայտնել աջակցել Հայաստանի՝ այդ կառույցում ընդգրկման հարցում:

Հանդիպել ենք նաև «Xinjiang Xihai Industrial Group» ընկերության ղեկավարության և արտերկրում չինական ձեռնարկությունների զարգացման ասոցիացիայի (China Overseas Development Association, CODA) նախագահ Հե Չժենվեյի հետ:

Հանդիպմանը քննարկել ենք էներգետիկայի ոլորտում երկկողմ համագործակցության հնարավորությունները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագա համագործակցության վերաբերյալ: Մասնավորապես «Գոտի և Ճանապարհ» նախաձեռնության շրջանակում ճանապարհային ենթակառուցվածքի զարգացման միտումները, այդ թվում՝ միջազգային և տարածաշրջանային տնտեսական համագործակցության, ինչպես նաև միջազգային և տարածաշրջանային տրանսպորտային հաղորդակցուղիների ցանցի զարգացման և ընդլայնման համար, ինչպես նաև այդ նախաձեռնությանը ինտեգրվելու Հայաստանի Հանրապետության հնարավորությունները:

Այցի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի շրջանակներում տեղի ունեցած հանդիպումների և քննարկումների արդյունքներով, Հայաստանի համար առավել քան կարևոր է քաղաքային կառավարման արդյունավետ մոդելի ընտրությունը, և այս ուղղությամբ որդեգրել է քաղաքային կառավարման տարբեր ոլորտներում խելացի տեխնոլոգիաների կիրառման քաղաքականությունը: Ներկայացվել է ՀՀ ներդրումային միջավայրը, ինչպես նաև կառավարության կողմից որդեգրած քաղաքականությունն օտարերկրյա ներդրումներ ներգրավելու նպատակով և այլն:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

10.24.2023